ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/76

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.06.2018թ. թիվ 03/26-3/10205-18 գրությամբ «Միարմա գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.06.2018թ. թիվ ԴՎԱ/1977 գրության հիման վրա, 07.06.2018թ. թիվ 03/26-3/10205-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Միարմա գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Միարմա գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Միարմա գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/76 ընթացակարգի շրջանակներում 11.06.2018թ. ժամը 10:15-ին և 15.06.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 11.06.2018թ. ժամը 10:15-ին նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով խնդրել է հետաձգել նիստը և տրամադրել ողջամիտ ժամկետ գործի նյութերին ծանոթանալու և դիրքորոշում ներկայացնելու համար:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.06.2018թ. թիվ ԴՎԱ/1977 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգում 5-րդ, 15-րդ, 27-րդ, 29-րդ, 37-րդ, 47-րդ 50-րդ, 65-րդ, 73-րդ և 84-րդ չափաբաժինների մասով «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ն (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Միարմա Գրուպ» ՍՊԸ-ն իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրել է օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշել է վերը նշված չափաբաժինների մասով «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/76 ընթացակարգի շրջանակներում 11.06.2018թ. ժամը 10:15-ին և 15.06.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/76 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/76 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ն 15.05.2018թ. ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 5-րդ, 15-րդ, 27-րդ, 29-րդ, 37-րդ, 47-րդ 50-րդ, 65-րդ, 73-րդ և 84-րդ չափաբաժինների մասով, որին 15.05.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերում նշված էլեկտրոնային փոստին պահանջվող փաստաթղթերը ուղարկվել են 21.05.2018թ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որակավորման

չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետից ուշ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.06.2018թ. թիվ 03/26-3/10205-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.06.2018թ. թիվ ԴՎԱ/1977 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարության համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ն 15.05.2018թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 5-րդ, 15-րդ, 27-րդ, 29-րդ, 37-րդ, 47-րդ 50-րդ, 65-րդ, 73-րդ և 84-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 15.05.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո սահմանված ժամկետում ներկայացնել Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր

կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել է հրավերով սահմանված ժամկետից ուշ:

Համաձայն գործում առկա նյութերի՝ «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ն հրավերով նախատեսված փաստաթղթերը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել է ***21.05.2018թ.:***

Այսպես՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ ***առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել*** որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ***ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:***

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերությանն ուղղված ծանուցումն Armeps համակարգի միջոցով ուղարկվել է ***15.05.2018թ.:*** Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, Ընկերության կողմից համապատասխան փաստաթղթերը պետք է ներկայացվեին մինչև ***20.05.2018թ. ներառյալ***, մինչդեռ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքի՝ «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվել են ***21.05.2018թ.,*** այսինքն մեկ աշխատանքային օր ուշացումով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.13-րդ ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Գտնում եմ, որ «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում խախտել է ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ***ժամկետներում*** ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր), սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում փաստացի չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.06.2018թ. թիվ 03/26-3/10205-18 գրությամբ «Միարմա գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01551076) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**